

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ)՝ **ՀՀ Կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N968-Լ որոշման** (այսուհետ՝ Որոշում) համաձայն երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության նպատակային ծրագրերի տեսակներն են՝

1. միանվագ դրամական աջակցություն մարզային բնակավայրերում հիփոթեքի միջոցով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու համար (այսուհետ՝ Մարզում հիփոթեքի աջակցություն),
2. երեխայի ծննդով պայմանավորված՝ աջակցություն հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին (այսուհետ՝ Հիփոթեքի մարման աջակցություն):

Նշված ծրագրերի իմաստով շահառուն երեխայի՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող ծնողն է, ում սեփականության իրավունքով պատկանում է հիփոթեքային վարկով ձեռք բերված կամ կառուցվող (կառուցված) բնակելի անշարժ գույքը և հանդիսանում է հիփոթեքային վարկ մարողը՝ վարկառուն:

### **1. Մարզում հիփոթեքի աջակցություն**

#### **Աջակցությունը տրամադրվում է՝**

1. մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակարան կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունք ձեռք բերող շահառուին և ուղղվում է կանխավճարի ֆինանսավորմանը\* կամ վարկի մնացորդային մայր գումարի մարմանը,
2. մարզային բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացած շահառուին և ուղղվում է հիփոթեքային վարկի մնացորդային մայր գումարի մարմանը:

*\*Եթե շահառուն կատարել է հիփոթեքային վարկի պայմանագրով նախատեսված կանխավճարը, ապա Մարզում հիփոթեքի աջակցության գումարն ուղղվում է հիփոթեքային վարկի մայր գումարի մարմանը:*

Անձը, որպես շահառու, Մարզում հիփոթեքի աջակցությունից կարող է օգտվել մեկ անգամ՝ մեկ հիփոթեքային վարկի շրջանակներում անկախ բնակարանային ապահովության պետական աջակցության այլ ծրագրերից օգտվելու հանգամանքից:

#### **Հիմնական պայմաններն են՝**

1. բնակելի անշարժ գույքը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը ձեռք է բերվել, կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկը տրամադրվել է 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո,
2. անշարժ գույքի կամ գնման իրավունքի ձեռքբերման և գնահատված շուկայական, կամ կառուցվող անշարժ գույքի նախահաշվային առավելագույն արժեքը՝ 35 մլն ՀՀ դրամ, որն ավելացվում է շահառուի 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի հաշվով 5 մլն ՀՀ դրամով,
3. կատարվող կանխավճարի նվազագույն չափը (առանց ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության)՝ երկրորդային շուկայից ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի առնվազն 10% և առաջնային շուկայից ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի առնվազն 7.5%,

**Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:**  
**Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:**  
**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից**

4. շահառուն ունի առնվազն 2 անչափահաս երեխա,
5. կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի, իսկ անհատական բնակելի տան կառուցման դեպքում կառուցվող տան նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է շահառուի և նրա ամուսնու (եթե առկա է գրանցված ամուսնություն) անունով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով,
6. ձեռք բերվող կամ կառուցվող բնակելի անշարժ գույքը հանդիսանում է շահառուին, գրանցված ամուսնության առկայության դեպքում՝ նաև նրա ամուսնուն, անձնական կամ ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով (50% և ավելի մասնաբաժնով) պատկանող միակ բնակելի անշարժ գույքը կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունքը,
7. հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը, կամ հողամասը (որի վրա անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով տրվել է հիփոթեքային վարկը), կամ անհատական բնակելի տունն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետությանը:

### Աջակցության չափը կազմում է՝

1. ձեռք բերվող բնակարանի արժեքի 5 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 1 մլն ՀՀ դրամը, որին ավելանում է 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար բնակարանի արժեքի 5, բայց ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր երեխայի համար,
2. անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով փաստացի ստացած հիփոթեքային վարկի (եթե վարկը տրամադրվում է փուլային հերթական փուլի) 10%-ը, բայց ոչ ավելի, քան 1 մլն ՀՀ դրամը, որին ավելանում է 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար վարկի 10%, բայց ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր երեխայի համար:

Առավելագույն աջակցության չափը (ներառյալ 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար սահմանված հավելումը) կազմում է 2 մլն ՀՀ դրամ: Եթե հիփոթեքային վարկը տրամադրվում է փուլերով, ապա ընդհանուր առավելագույն չափը կիրառվում է հիփոթեքային վարկի ամբողջ գումարի նկատմամբ: Եթե շահառուն հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույքը ձեռք է բերում կամ անհատական բնակելի տունը կառուցում է [ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման](#) N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրում (այսուհետ՝ Սահմանամերձ բնակավայր) կամ [Որոշման](#) N 2 հավելվածով հաստատված՝ ՀՀ առանձին գյուղական բնակավայրերի ցանկում ընդգրկված բնակավայրում (այսուհետ՝ Առանձին բնակավայր), ապա Մարզում հիփոթեքի աջակցությունն ավելացվում է 50 տոկոսով:

## 2. Հիփոթեքի մարման աջակցություն

### Աջակցությունը տրամադրվում է՝

հիփոթեքային վարկ (այդ թվում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով) մարող շահառուին՝ երեխա ունենալու դեպքում, որն ուղղվում է հիփոթեքային վարկի մնացորդային մայր գումարի մարմանը:

Շահառուն իրավունք ունի օգտվել Հիփոթեքի մարման աջակցությունից՝ անկախ բնակարանային ապահովության պետական աջակցության այլ ծրագրերից օգտվելու հանգամանքից:

### Հիմնական պայմաններն են՝

1. շահառուն պետք է դիմի մինչև երեխայի 1 տարին լրանալը (ներառյալ),

2. անշարժ գույքի կամ գնման իրավունքի ձեռքբերման և գնահատված շուկայական, կամ կառուցվող անշարժ գույքի նախահաշվային առավելագույն արժեքը՝ 35 մլն ՀՀ դրամ, որն ավելացվում է շահառուի 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի հաշվով 5 մլն ՀՀ դրամով: Մեկից ավելի գնահատված շուկայական արժեքների առկայության դեպքում դիտարկվում է առավել մեծը, իսկ եթե անշարժ գույքը ձեռք բերելուց հետո շահառուն փոխել է հիփոթեքային վարկը տրամադրած կազմակերպությունը, ապա գնահատված շուկայական գինը որոշվում է վարկի տեղափոխության շրջանակներում կատարված գնահատման արդյունքներով,
3. դիմելու օրվա դրությամբ շահառուն առնվազն 12 ամիս կատարել է հիփոթեքային վարկի մարումներ և վերջին 12 ամիսների ընթացքում մարված հիփոթեքային վարկի գծով մարման ուշացումների ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օրացուցային օրը,
4. ձեռք բերված կամ կառուցվող/կառուցված բնակելի անշարժ գույքը հանդիսանում է շահառուին, գրանցված ամուսնության առկայության դեպքում՝ նաև նրա ամուսնուն, անձնական կամ ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով (50% և ավելի մասնաբաժնով) պատկանող միակ բնակելի անշարժ գույքը կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունքը,
5. հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը, կամ հողամասը (որի վրա անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով տրվել է հիփոթեքային վարկը) կամ անհատական բնակելի տունն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետությանը:

### Աջակցության չափը կազմում է

Հիփոթեքի մարման աջակցության չափը կազմում է դիմելու օրվա դրությամբ՝

1. վարկի մնացորդային մայր գումարի 10% չափով (բայց ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամը), իսկ Երևան քաղաքում 5%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամը), եթե նոր ծնվածը շահառուի 1-ին կամ 2-րդ երեխան է,
2. վարկի մնացորդային մայր գումարի 50%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 2,000,000 ՀՀ դրամը), իսկ Երևան քաղաքում 25%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 2,000,000 ՀՀ դրամը), եթե նոր ծնվածը շահառուի 3-րդ և հաջորդ երեխան է,
3. 1-ին և 2-րդ կետերում նշված երեխաների թվում հաշվի են առնվում նաև շահառուի չափահաս զավակները,
4. միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում աջակցության չափը նոր ծնված 2-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար հաշվարկվում է 1-ին և 2-րդ կետերով սահմանված եղանակով՝ որպես մնացորդային մայր գումար դիտարկելով դիմելու օրվա դրությամբ մնացորդային մայր գումարի և նոր ծնված 1-ին երեխայի համար հաշվարկված աջակցության չափի տարբերությունը,
5. եթե շահառուն հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույքը ձեռք է բերել կամ անհատական բնակելի տունը կառուցել/կառուցում է Սահմանամերձ բնակավայրում կամ Առանձին բնակավայրում, ապա Հիփոթեքի մարման աջակցությունն ավելացվում է 50%-ով:

### Ուշադրություն

**Նպատակային ծրագրերի շրջանակներում հաշվի են առնվում միայն ողջ (շահառուի խնամքի տակ գտնվող) երեխաները:**

**Բանկին փոխանցված պետական աջակցության գումարները կարող են օգտագործվել բացառապես երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան և չեն կարող արգելադրվել (որվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, կամ որևէ կերպ կանխիկացվել:**

**Շահառուին Մարզում հիփոթեքի աջակցության մասին որոշումն ուժի մեջ է Նախարարության կողմից Բանկին տեղեկացնելու օրվանից հաշված՝ 60 օրացուցային օրվա ընթացքում (60-օրյա ժամկետը լրանալուց հետո Մարզում հիփոթեքի աջակցության համար ներկայացվում է նոր դիմում):**

**Եթե երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերով նախատեսված գումարն ուղղվում է հիփոթեքային վարկի մնացորդային մայր գումարի վաղաժամկետ մարմանը, ապա հիփոթեքային վարկի վաղաժամկետ մարման համար «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տույժեր և/կամ տուգանքներ չեն գանձվում:**

## Մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով

ՀՀ Կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N° 968-L որոշում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190883>

ՀՀ Կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N° 1167-L որոշում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190884>

Բանկի կողմից առաջարկվող անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկեր՝

<https://www.conversebank.am/hy/house/>

## Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

## Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,**

**«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ**

**Էլ. փոստ՝ [info@fsm.am](mailto:info@fsm.am),**

**Հեռախոս՝ (+37460) 70-11-11,**

**Ֆաքս՝ (+37410) 58-24-21**

## Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով  
WhatsApp՝ +374 95 511 211  
Skype՝ conversebank-callcenter